ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հոկտեմբերի 5-ից 7-ը ՌԴ քաղաք Մոսկվա

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

   Տիգրան Պետրոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ Շիրակի մարզպետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   ՌԴ ք. Մոսկվա, հոկտեմբերի 5-ից 7-ը

4. **Հրավիրող կողմը**

   «Ռուսաստանի Հայերի Միություն» համառուսական հասարակական կազմակերպության մոսկովյան քաղաքային բաժանմունք

5. **Գործուղման նպատակը**

   Հանդիպել տեղի հայ համայնքի ներկայացուցիչներին, գործարարներին: Քննարկել հնարավոր համագործակցությանը վերաբերող հարցեր, ներկայացնել մարզի զարգացմանն առնչվող առաջարկներ ու ծրագրային փաթեթներ, ինչպես նաև մասնակցել «Սիրով Շիրակի մարզին» խորագրով բարեգործական համերգին, որից ստացված հասույթն ուղղվել է Շիրակի մարզի կարիքավոր ընտանիքներին:

6. **Քննարկված թեմաները**

Շիրակի մարզի և Ռուսաստանում բնակվող հայ ու ծնունդով շիրակցի գործարարների համագործակցությանը վերաբերող հարցեր, ծանոթացում մարզի ներդրումային հնարավորություններին, արդեն պատրաստ ծրագրային առաջարկների ներկայացում, ինչպես նաև մարզում արտադրվող որոշ ապրանքատեսակների համար տաղավարների տրամադրում Մոսկվայի Ժողովրդական տնտեսության ձեռքբերումների ցուցասրահ-համալիրի (ՎԴՆԽ) տարածքում, ինչը հնարավորություն է տալու մարզում արտադրվող ապրանքատեսակները ռուսական շուկա արտահանելու:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Մոսկվայի Ժողովրդական տնտեսության ձեռքբերումների ցուցասրահ-համալիրի (ՎԴՆԽ) տարածքում գտնվող «Հայաստան» տաղավարի քննարկումների սրահում Տիգրան Պետրոսյանն ընդլայնված հանդիպում է ունեցել տեղի հայ գործարարների հետ, հանդիպմանը մասնակցել են նաև ծնունդով շիրակցի գործարարներ: Մարզպետը ներկայացրել է Շիրակի մարզի զարգացման ոլորտային ուղիները, ներդրումային հնարավորությունները և 20-ից ավել ծրագրային առաջարկներ: Ծավալվել է գործնական երկխոսություն, Տիգրան Պետրոսյանը պատասխանել է գործարարներին հուզող հարցերին:

Շիրակի մարզպետը հանդիպել է նաև Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հետ /նախապես չպլանավորված հանդիպում Արա Աբրահամյանի նախաձեռնությամբ/: Հանդիպման ընթացքում քննարկվել են Ռուսաստանի հայ համայնքի և Շիրակի մարզի հնարավոր համագործակցության հետ կապված հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը

Քննարկումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել Մոսկվայի Ժողովրդական տնտեսության ձեռքբերումների ցուցասրահ-համալիրի (ՎԴՆԽ) տարածքում Շիրակի մարզի ապրանքատեսակների համար տաղավարների

տրամադրման հարցում, ինչը հնարավորություն է տալու մարզի որոշ ապրանքանիշներ ռուսական շուկա արտահանելու:

Իսկ «Սիրով Շիրակի մարզին» բարեգործական համերգից ստացված հասույթը մոսկովյան քաղաքային բաժանմունքի կողմից արդեն տրամադրվել է Շիրակի մարզի կարիքավոր 30-ից ավելի ընտանիքների:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Մոսկովյան այցի շրջանակներում պայմանավորվածություն կա Շիրակի մարզում արտադրվող որոշ ապրանքատեսակների համար Մոսկվայի Ժողովրդական տնտեսության ձեռքբերումների ցուցասրահ-համալիրի (ՎԴՆԽ) տարածքում տաղավարների տրամադրման հարցում:

Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել սոցիալական, մարդասիրական և մշակութային ծրագրեր իրականացնելու մասին:

10. Գործուղվողը

ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____